

Ծ Ր Ա Գ Ի Ր

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԲԸ N-2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ
ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՑՄԱՆ**

(ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄ - 2)

Բովանդակություն

Բովանդակություն.....	2
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	4
1) ԱՌԱՐԿԱՆ և ՀԱՄԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	4
2) ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	6
3) ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	8
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի N-2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	9
3. ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի N-2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԿՐԿՆԱԿԻ ԵՐԿԱՐԱՑՄԱՆ (ՇԺԵ-2) ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ	10
4. ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի N-2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԿՐԿՆԱԿԻ ԵՐԿԱՐԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	12
1) I ՓՈՒԼ	12
Ա. ՀԱՄԱԼԻՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ	12
Բ. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	17
Գ. «ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի N-2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԺԱՄԿԵՏԻՆ (ՇԼԺ-2) ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԾՐԱԳՐԻ» ՄՇԱԿՈՒՄ	17
2) II ՓՈՒԼ.....	19
Ա. ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ	19
Բ. II ՓՈՒԼՈՒՄ ՊԵՏՔ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԻ՝	20
Գ. ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ:.....	23
5. ՇԺԵ-2-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ...27	
6. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՇԺԵ-2-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	29
7. ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի N-2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԿՐԿՆԱԿԻ ԵՐԿԱՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԾԱԽՍԵՐՈՎ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԵՏԳՆՄԱՆ	

**ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-ՈՒՄ ԱՐՏԱԴԻՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ
ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՂ
ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎՐԱ30**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Առարկան և հասկացությունները

- ա. Միջուկային տեղակայանք՝** միջուկային ռեակտոր, միջուկային վառելիքի պահեստարան, ատոմային կայան, միջուկային նյութի վերամշակման, արտադրության օբյեկտ:
- բ. Անվտանգություն (միջուկային և ճառագայթային)՝** ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտի հատկություն՝ օբյեկտի բնականոն շահագործման և բնականոն շահագործումից շեղումների (ներառյալ՝ վթարների) դեպքում անձնակազմի, բնակչության և շրջակա միջավայրի վրա ճառագայթային ազդեցությունները թույլատրված սահմաններով սահմանափակելը:
- գ. Տեխնիկական վիճակ՝** Ժամանակի որոշակի պահին, շրջակա միջավայրի որոշակի պայմաններում տարրերի տեխնիկական փաստաթղթերով սահմանված պարամետրերի արժեքներով բնութագրվող վիճակ:
- դ. Համալիր հետազոտում՝** ԱԷԿ-ի էներգաբլոկի տարրերի փաստացի վիճակի որոշման, դրանց մնացորդային ռեսուրսի և ԱԷԿ-ի էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման հնարավորության գնահատման հետազոտություններ:
- ե. Արդիականացում՝** հիմնական միջոցների գործելու սկզբնապես ընդունված նորմատիվ ցուցանիշների, օրինակ՝ օգտակար օգտագործման գործակցի, հզորության, կիրառման որակի և այլնի բարելավման (բարձրացման) աշխատանքներ:
- զ. Մոդիֆիկացիա՝**
- ա. ատոմակայանի անվտանգության մակարդակի բարձրացմանը նպաստող փոփոխություններ, որոնց նպատակն է կայանի անվտանգության մակարդակը համապատասխանեցնել նորմերի և կանոնների պահանջներին:
 - բ. ատոմակայանի հուսալիության բարձրացմանն ուղղված փոփոխություններ:
- է. Չվերականգնվող տարր՝** տարր, որի համար դիտարկվող իրավիճակում աշխատունակության վիճակի վերականգնում նախատեսված չէ նորմատիվ-տեխնիկական և (կամ) նախագծային (կոնստրուկտորական) փաստաթղթերով կամ տնտեսապես նպատակահարմար չէ:
- ը. Չփոխարինվող տարր՝** տարր, որի փոխարինումը անհնար է և (կամ) տնտեսապես նպատակահարմար չէ:
- թ. Նորմատիվ-տեխնիկական փաստաթղթեր՝** Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի համալիր հետազոտման նախագծի շրջանակներում կիրառման ենթակա նորմերն ու կանոնները, նորմատիվային փաստաթղթերը, ստանդարտները՝ ներառյալ ճյուղային ստանդարտները, որոնք պահանջներ են սահմանում աշխատանքների և ծառայությունների, նյութերի և սարքավորումների նկատմամբ:

- ժ. Որակի ապահովում`** կազմակերպության ղեկավարման և կառավարման համակարգված գործունեության մաս, որի նպատակն է ստեղծել վստահություն, որ որակին ներկայացվող պահանջները կկատարվեն:
- ի. մնացորդային ռեսուրս`** տարրի աշխատանքի գումարային տևողությունը` դրա տեխնիկական վիճակի հետազոտման պահից մինչև սահմանային վիճակին հասնելը:
- լ. շահագործման լրացուցիչ ժամկետ`** էներգաբլոկի թույլատրված հզորությամբ շահագործման նախագծային ժամկետից ավելի աշխատանքի օրացուցային տևողությունը (ժամանակահատվածը):
- խ. շահագործման ժամկետի կրկնակի երկարացում`** շահագործման երկրորդ լրացուցիչ ժամկետին էներգաբլոկի նախապատրաստում:
- կ. Սահմանային վիճակ`** տարրի վիճակ, երբ դրա հետագա շահագործումն անթույլատրելի է կամ դրա աշխատունակության վերականգնումն անհնար է կամ տնտեսապես աննպատակահարմար:
- հ. Շահագործման նախագծային ժամկետի երկարացում`** շահագործման լրացուցիչ ժամկետին էներգաբլոկի նախապատրաստում:
- ձ. Տարր`** հուսալիության և անվտանգության վերլուծության ժամանակ դիտարկվող, էներգաբլոկի նախագծում որպես կառուցվածքային միավոր հանդիսացող և ինքնուրույն կամ համակարգի կազմում, սահմանված գործառույթների կատարումն ապահովող սարքավորումներ, չափող սարքեր, խողովակաշարեր, մալուխներ, շինարարական կոնստրուկցիաներ և այլն:

2. Հապավումներ

«ՀԱԷԿ» ՓԲԸ	«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն
ԱԲՎ	ապարատային բաժնի վահանակ
ԱԳՎՀՀ	ակտիվ գոտու վթարային հովացման համակարգ
ԱԷՄԳ	Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն
ԱԿՀ	անվտանգության համար կարևոր համակարգ
ԱՀ	անվտանգության համակարգ
ԱՄՎ	աշխատած միջուկային վառելիք
ԱՊԴ	անվտանգության պարբերական դիտարկում
ԲԿՎ	բլոկի կառավարման վահանակ
ԲԿՎ	բլոկի կառավարման վահանակ
ԳՇԽ	գլխավոր շրջանառու խողովակ
ԳՇՊ	գլխավոր շրջանառու պոմպ
ԿՀ	կայանային հանձնաժողով
ՀԱԷԿ	Հայկական ատոմային էլեկտրակայան
ՀԱԷԿ-ի ԳՏ ԱՏ	Հայկական ատոմային էլեկտրակայանի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ
ՀԱԷԿ-ի ԳԾ	Հայկական ատոմային էլեկտրակայանի գլխավոր ճարտարագետ
ՀԱԿ	հզորության ավտոմատ կարգավորիչ
ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՀԿԲ	համակարգեր, կառուցատարրեր, բաղադրամասեր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ՄԱԿ Կոմիտե	Հայաստանի Հանրապետության Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե
ՀՍՀ	հուսալի սնուցման համակարգ
ՄՌՎ	միջանկյալ ռեկենների վահանակ
ՄՎ	միջուկային վառելիք

ՆՀՀՍ	նեյտրոնային հոսքի հսկման սարքավորում
ՆՌՏՎՀ	ներռեակտորային տեխնոլոգիական վերահսկման համակարգ
ՆՏՓ	նորմատիվ-տեխնիկական փաստաթղթեր
ՇԳ ՍԴՊ	շոգեգեներատորների սնուցման դիզելային պոմպ
ՇԺԵ	շահագործման ժամկետի երկարացում
ՇԺԵ-2	շահագործման ժամկետի կրկնակի երկարացում
ՇԼԺ	շահագործման լրացուցիչ ժամկետ
ՇՊ	շրջանառու պոմպ
ՊՆՎ	պլանային-նախազգուշական վերանորոգում
ՌԿ	ռեակտորային կայանք
ՌԿՊՀ	ռեակտորի կառավարման և պաշտպանության համակարգ
ՍԿՎՇԸ	սիմտոմատիկ-կողմնորոշված վթարային, շահագործական ընթացակարգեր
ՎԿՓ կասետ	վթարային կարգավորող փոխհատուցող կասետ
ՏՍևՎ	տեխնիկական սպասարկում և վերանորոգում
ՏՏՍ	տրանսպորտատեխնոլոգիական սարքավորումներ
ՓՀՇՀ	փրփուր-հրդեհաշիջման համակարգ

3. Ներածություն

ա. Նշանակություն և նպատակ

- «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետը երկարացնելու (ՇԺԵ – 2) ծրագիրը (այսուհետ՝ «Ծրագիր») մշակվել է Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման ընթացակարգի պահանջների պահպանումն ապահովելու համար՝ ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N1085-Ն որոշման հավելվածում շարադրված պահանջների դրույթներին համապատասխան:
- Մինչև «Ծրագրով» նախատեսված աշխատանքների մեկնարկը, համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1085-Ն որոշման հավելված «Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման պահանջների», անհրաժեշտ է՝
 - «ՀԱԷԿ» ՓԲԸ կողմից համալիր հետազոտության համար նախատեսված ՀԿԲ-երի ցանկը համաձայնեցնել ՀՀ ՄԱԿ Կոմիտեի հետ,
 - «ՀԱԷԿ» ՓԲԸ կողմից Կոմիտե ներկայացնել էներգաբլոկի համալիր հետազոտման ընդհանուր ծրագիրը և անվտանգության I, II, III դասերի տարրերի հետազոտման աշխատանքային ծրագրերը:
- «Ծրագիրը» սահմանում և պարունակում է Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման ոլորտում «ՀԱԷԿ» ՓԲԸ գործունեության հիմնական ուղղությունները:
- «Ծրագիրը» մշակվել է Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման աշխատանքները կազմակերպելու և կառավարելու նպատակով:

բ. Կիրառման և տարածման ոլորտ

- «Ծրագիրը» կիրառվում է Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման (ՇԺԵ-2) աշխատանքների իրականացման ժամանակ:
- «Ծրագրի» պահանջները պարտադիր են «ՀԱԷԿ» ՓԲԸ, ինչպես նաև այն կազմակերպությունների անձնակազմերի համար, որոնք ներգրավված կլինեն Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի ՇԺԵ-2 Ծրագրի աշխատանքներում:

գ. Պարտականությունների և պատասխանատվության բաշխում

- Սույն «Ծրագրի» մշակողը և դրա որակի համար պատասխանատվություն կրողը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն է:
- Սույն «Ծրագրի» շրջանակներում աշխատանքների նախաձեռնողը և կազմակերպիչը, ինչպես նաև դրանց ժամանակին և որակյալ կատարման համար պատասխանատուն շահագործման ժամկետի երկարացման կայանային հանձնաժողովն է (ՇԺԵ-2 ԿՀ)՝ ձևավորված «ՀԱԷԿ» ՓԲԸ ԳՏ-ի՝ ՇԺԵ-2-ի հարցերի գծով կայանային հանձնաժողով ստեղծելու մասին» 2022 թվականի սեպտեմբերի 8-ի N 767-Ա հրամանով:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի N-2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- 1) Հայկական ԱԷԿ-ի առաջին էներգաբլոկը շահագործման է հանձնվել 1976 թվականի դեկտեմբերի 22-ին, երկրորդը՝ 1980 թվականի հունվարի 5-ին:
- 2) Հայկական ԱԷԿ-ի ընդհանուր դրվածքային էլեկտրական հզորությունը կազմել է 815 ՄՎտ (յուրաքանչյուր էներգաբլոկի դրվածքային էլեկտրական հզորությունը՝ 407,5 ՄՎտ):
- 3) էներգաբլոկների շահագործման նախագծային ժամկետը 30 տարի է:
- 4) Չնայած այն հանգամանքին, որ Հայկական ԱԷԿ-ը դիմացավ Սպիտակի ավերիչ երկրաշարժին (1988 թվականի դեկտեմբերի 7), այդ պատահարը որոշիչ գործոն հանդիսացավ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի՝ Հայկական ԱԷԿ-ի կանգի վերաբերյալ որոշման ընդունման հարցում. N-1 էներգաբլոկը կանգնեցվեց 1989 թվականի փետրվարի 25-ին, N-2 էներգաբլոկը կանգնեցվեց 1989 թվականի մարտի 18-ին:
- 5) 1993 թվականի ապրիլի 3-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում ընդունեց վերագործարկել Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկը: Էներգաբլոկի վերագործարկման համար բոլոր անհրաժեշտ տեխնիկական միջոցառումների հաջող իրականացումից հետո 1995 թվականի նոյեմբերի 5-ին Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկը կրկին գործարկվեց և միացվեց Հայաստանի Հանրապետության էներգահամակարգին՝ ռեակտորի մինչև 92% թույլատրելի ջերմային հզորությամբ:
- 6) Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի առաջին երկարացման աշխատանքների արդյունքում, Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման լիցենզիայի ժամկետը երկարացվեց մինչև 2031 թվական՝ մինչև 2026 թվականի սեպտեմբեր հզորությամբ աշխատելու թույլտվությամբ:

3. ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի N-2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԿՐԿՆԱԿԻ ԵՐԿԱՐԱՑՄԱՆ (ՇԺԵ-2) ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

- 1) 2021 թվականին ընդունված Էներգետիկայի բնագավառի (մինչև 2040 թվական) ռազմավարական ծրագրով ՀԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի՝ 2026 թվականից հետո շահագործման ժամկետի երկարացումը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հիմնական առաջնահերթություններից մեկը, իսկ շահագործման լրացուցիչ ժամկետի ավարտին նոր ատոմային կայանի շահագործման հանձնումը՝ հիմնական նպատակը: Ատոմակայանի առկայությունն էներգահամակարգում թույլ կտա ավելի դիվերսիֆիկացնել էներգետիկ ռեսուրսները, չմեծացնել ներկրվող բնական գազից կախվածությունը, ինչպես նաև արտանետումների ծավալը:
- 2) Ատոմային էներգաբլոկի դերը մեր համակարգում ոչ միայն ակտիվ էներգիայի արտադրությամբ է կարևոր այլ նաև ռեակտիվ էներգիայի մատակարարման և էլեկտրաէներգետիկական համակարգի հաճախականության կարգավորման առումով, ուստի մեր համակարգում միջուկային էներգաբլոկը կարող է փոխարինվել կամ միջուկային էներգաբլոկով կամ ջերմային: Ջերմային էներգաբլոկով փոխարինումը կհանգեցնի գազի սպառման ծավալների կտրուկ աճի հետևապես նաև գազից կախվածության մակարդակի բարձրացման: Գազով էլեկտրաէներգիայի արտադրությունը ոչ միայն ավելի թանկ է քան գործող ատոմային էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացումը այլև անընդունելի է այդչափ մեծացնել գազից կախվածությունը, որը անպայմանորեն կնվազեցնի էներգետիկ անկախության մակարդակը:
- 3) Նոր միջուկային բլոկի կառուցման համար ըստ վերջին տարիների միջազգային փորձի անհրաժեշտ է 10-12 տարի, ինչը նշանակում է, որ մեզ համար նոր էներգաբլոկի շահագործման հանձնելը իրատեսական է 2034-2036 թվականների ընթացքում, իսկ մինչ այդ պետք է կամ երկարացնել գործող էներգաբլոկի շահագործման ժամկետը կամ մինչև 2026 թվականը կառուցել այլ փոխարինող հզորություններ : Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի ռեակտորի իրանի թրծաթողման աշխատանքների կատարումից հետո կատարված հաշվարկները ցույց տվեցին, որ որոշակի աշխատանքների իրականացման պայմաններում հնարավոր է ռեակտորը շահագործել մինչև 2039 թվականը:
- 4) Հաշվի առնելով Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի առաջին երկարացմանը նախապատրաստվելու ընթացքում իրականացված չփոխարինվող և չվերականգնվող ՀԿԲ-երի հետազոտության արդյունքները, ինչպես նաև ժամկետի կրկնակի երկարացում իրականացրած այլ ԱԷԿ-ների փորձը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն հնարավոր է համարում Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացումը:

5) Վերոնշյալ փաստարկները հաշվի առնելով, ինչպես նաև «ՀԱԷԿ» ՓԲԸ գործող վարկերի մարումները 2026 թվականից հետո պետական բյուջեի բեռը թեթևացնելու նկատառումներից ելնելով («ՀԱԷԿ» ՓԲԸ գործող վարկերի մարումները նախատեսված են մինչև 2035 թվականը), որոշում կայացվեց մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման սույն ծրագիրը:

4. ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի N-2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԿՐԿՆԱԿԻ ԵՐԿԱՐԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման աշխատանքները, ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1085-Ն որոշման համաձայն, իրականացվում են երկու փուլով.

1) I փուլ – էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման տեխնիկական հնարավորության, անվտանգության և տնտեսական նպատակահարմարության գնահատում:

2) II փուլ – լրացուցիչ ժամանակահատվածում շահագործմանը էներգաբլոկի նախապատրաստում:

«ՀԱԷԿ» ՓԲԸ կողմից պետք է նախապատրաստվի, ներքին ընթացակարգերով հաստատվի ՇԺԵ-2-ի որակի ապահովման ծրագիր և գործողության մեջ դրվի մինչև Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման իրականացման աշխատանքային ծրագրի աշխատանքները սկսելը:

1. I ՓՈՒԼ

Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման տեխնիկական հնարավորության գնահատման I-ին փուլի շրջանակներում պետք է իրականացվեն՝

- էներգաբլոկի համալիր հետազոտում,
- էներգաբլոկի անվտանգության գնահատում,
- շահագործման լրացուցիչ ժամկետին էներգաբլոկի նախապատրաստման ծրագրի մշակում:

ա. Համալիր հետազոտություն

- Համալիր հետազոտության նպատակն է գնահատել Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի համակարգերի և տարրերի փաստացի վիճակը և մնացորդային ռեսուրսը՝ ՇԼԺ-2-ին նախապատրաստվելու ծրագրի մշակման համար:
- Համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1085-Ն որոշմամբ սահմանված «Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացմանը ներկայացվող պահանջների» համալիր հետազոտման ենթակա են անվտանգության 1-ին, 2-րդ և 3-րդ դասերի համակարգերն ու տարրերը:

- Բացի վերը նշվածներից, համալիր հետազոտության պետք է ենթարկվեն անվտանգության 4-րդ դասի այն տարրերը, որոնք ընտրվել են ըստ Հայկական ԱԷԿ-ի ԳՃ կողմից 2021 թվականի մայիսի 11-ին հաստատված «Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի ծերացման կառավարման նպատակով համակարգերի, կառուցատարրերի և բաղադրամասերի ընտրման մեթոդաբանություն» ՄԵ.ՅՏԴ.28.ՔՈՅ-001 փաստաթղթի չափանիշների:
- Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի ՇԺԵ-2-ի շրջանակներում վերլուծության ենթակա համակարգերի, կառուցատարրերի և բաղադրամասերի (ՀԿԲ) ցանկերի ձևավորման չափանիշները, ի լրումն «Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացմանը ներկայացվող պահանջների» (ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N1085-Ն որոշման հավելված), ներկայացված են Հայկական ԱԷԿ-ի ԳՃ կողմից 2021 թվականի մայիսի 11-ին հաստատված «Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի ծերացման կառավարման նպատակով համակարգերի, կառուցատարրերի և բաղադրամասերի ընտրման մեթոդաբանություն» ՄԵ.ՅՏԴ.28.ՔՈՅ-001 փաստաթղթում:
- Համալիր հետազոտության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունում, համաձայն ՀՀ ՄԱԿ Կոմիտեի նախագահի 2016 թվականի հունվարի 19-ի N 9-Ն հրամանի հավելվածի, պետք է ամփոփվեն՝
 - շահագործման, նախագծային և կոնստրուկտորական փաստաթղթերի վերլուծության արդյունքները,
 - շահագործման փորձի վերլուծության արդյունքները,
 - Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի և տարրերի տեխնիկական վիճակի գնահատման արդյունքները,
 - շահագործման լրացուցիչ ժամկետի ընթացքում առաջացող աշխատած միջուկային վառելիքի պահման և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման հնարավորության գնահատման արդյունքները:
- Համալիր հետազոտության արդյունքում պետք է հիմնավորվեն.
 - էներգաբլոկի շահագործման լրացուցիչ ժամկետի ընթացքում անվտանգության ապահովման հնարավորությունը,
 - էներգաբլոկի չվերականգնվող և չփոխարինվող տարրերի անհրաժեշտ մնացորդային ռեսուրսի առկայությունը,
 - էներգաբլոկի շահագործման լրացուցիչ ժամկետի ընթացքում առաջացող աշխատած միջուկային վառելիքի լրացուցիչ քանակի պահման հնարավորությունը,
 - շահագործման լրացուցիչ ժամկետի ընթացքում առաջացող ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման հնարավորությունը,
 - էներգաբլոկը շահագործումից հանելու ժամանակ անվտանգության ապահովման հնարավորությունը:

- Չփոխարինվող և չվերականգնվող տարրերի մնացորդային ռեսուրսի գնահատումը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով հետազոտության պահին այդ տարրերի փաստացի վիճակը և դրանց տեխնոլոգիական պարամետրերի կանխատեսվող փոփոխությունը շահագործման լրացուցիչ ժամկետի ողջ ընթացքում (անհրաժեշտության դեպքում պետք է կատարվեն ամրության հաշվարկներ և լրացուցիչ փորձարկումներ):
- Տարրերի տեխնիկական վիճակի գնահատման և մնացորդային ռեսուրսի հիմնավորման ընթացքում անհրաժեշտ է կատարել.
 - շահագործման ռեժիմների վերլուծություն,
 - վերանորոգման և տեխնիկական սպասարկման արդյունքների վերլուծություն,
 - շրջակա միջավայրի պայմաններում աշխատանքի համար ատեստավորման արդյունքների վերլուծություն,
 - մետաղի ստուգման արդյունքների վերլուծություն,
 - հուսալիության և ամրության վերաբերյալ տվյալները հաստատող հաշվարկներ,
 - լրացուցիչ փորձարկումների անցկացում:
- Էներգաբլոկի համալիր հետազոտությունը պետք է ապահովի.
 - հետազոտված ՀԿԲ-երի ընթացիկ տեխնիկական վիճակի գնահատում և դրանց մնացորդային ռեսուրսի նախնական գնահատում,
 - ռեսուրսը սպառած և փոխարինման ենթակա տարրերի որոշում,
 - այն տարրերի որոշումը, որոնց ռեսուրսների կառավարումը կատարվում է ՏՍԱՎ համակարգի շրջանակներում,
 - չփոխարինվող և չվերականգնվող տարրերի որոշում և դրանց մնացորդային ռեսուրսի նախնական գնահատում,
 - այն չփոխարինվող և չվերականգնվող տարրերի որոշումը, որոնց տեխնիկական վիճակը և մնացորդային ռեսուրսը գնահատելու համար անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ աշխատանքներ կամ մշակել դրանց ռեսուրսների կառավարման լրացուցիչ ծրագրեր,
 - մնացորդային ռեսուրս ունեցող փոխարինվող այն տարրերի որոշումը, որոնց ծառայության ժամկետը կարող է երկարացվել որոշակի ժամանակահատվածով,
 - չվերականգնվող և չփոխարինվող այն տարրերի որոշումը, որոնք սահմանափակում են էներգաբլոկի ծառայության ժամկետը, ինչպես նաև այն տարրերի, որոնց ռեսուրսը սպառվում է ավելի շուտ, քան ծառայության նախագծային ժամկետը կամ շահագործման նախատեսված լրացուցիչ ժամկետը և որոնց համար պահանջվում է նշված ժամկետների լրացուցիչ գնահատում,
 - շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում կուտակված աշխատած միջուկային վառելիքի պահման հնարավորության գնահատում,

- շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում գոյացած ճառագայթաակտիվ թափոնների անվտանգ կառավարման հնարավորության գնահատում:
- Տարրերի մնացորդային ռեսուրսի նախնական գնահատումը պետք է հիմնված լինի նրանց շահագործման պատմության, նախագծային և կոնստրուկտորական փաստաթղթերի պահանջների և նյութագիտական տվյալների վերլուծության վրա: Նշված վերլուծությունը պետք է հաստատի, որ
 - բացահայտվել են հետազոտվող տարրերի ծերացման մեխանիզմներն ու ինտենսիվությունը
 - կազմակերպվել է տարրերի վերահսկում (կամ կա դրա ներդրման հնարավորություն), ինչը թույլ է տալիս բացահայտել նրանց բնութագրերի վատթարացումը մինչև սահմանային վիճակի հասնելը:
- Համալիր հետազոտության ընթացքում պետք է գնահատվի չվերականգնվող տարրերի շահագործման ժամկետի երկարացման կամ փոխարինման տեխնիկական հնարավորությունը, որի համար՝
 - կատարվում է նրանց մնացորդային ռեսուրսի նախնական գնահատումը,
 - մշակվում է տեխնիկական վիճակի և մնացորդային ռեսուրսի գնահատման լրացուցիչ աշխատանքների ցանկը,
 - սահմանվում է մշակման (լրամշակման) ենթակա ռեսուրսի կառավարման ծրագրերի ցանկը.
 - կատարվում է տարրերի փոխարինման տեխնիկական հնարավորության գնահատումը:
- Տարրերի փոխարինման նպատակահարմարության գնահատումը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները՝
 - միատեսակ տարրերի փոխարինման փորձված տեխնոլոգիաների առկայությունը,
 - խոշոր չափերի ճառագայթաակտիվ տարրերի օգտահանման հնարավորությունը,
 - տարրերի փոխարինման ժամանակ անձնակազմի ճառագայթահարման բաժնաչափերը:
- Համալիր հետազոտության ընթացքում անհրաժեշտ է իրականացնել՝
 - տարրերի տեխնիկական սպասարկման և վերանորոգման համակարգի արդյունավետության գնահատում և վերլուծություն՝ շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում տարրերի ռեսուրսի պահպանման և վերականգնման հնարավորության տեսանկյունից,
 - տարրերի մետաղի հետազոտման և արատորոշման համակարգի արդյունավետության գնահատում և վերլուծություն ծերացման մեխանիզմների հայտնաբերման տեսանկյունից:

- Համալիր հետազոտության շրջանակներում պետք է գնահատվի շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում կուտակված աշխատած միջուկային վառելիքի պահման հնարավորությունը ներառյալ՝
 - առկա և շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում գոյացող աշխատած միջուկային վառելիքի քանակի և բնութագրերի գնահատում,
 - առկա և շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում կուտակված ԱՄՎ-ի անվտանգ պահման հնարավորության գնահատում և հիմնավորում,
 - պահեստարանների անվտանգության վերագնահատում, առկա ազատ անոթների, նրանց տեխնիկական վիճակի և մնացորդային ռեսուրսի գնահատում,
 - շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում գոյացող աշխատած միջուկային վառելիքի պահումն ապահովող միջոցառումների մշակում և հիմնավորում:
- Համալիր հետազոտության շրջանակներում պետք է իրականացվի շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում ճառագայթաակտիվ թափոնների անվտանգ կառավարման հնարավորության գնահատում՝ ներառյալ՝
 - առկա (պահվող) և շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում գոյացող ճառագայթաակտիվ թափոնների անվտանգ կառավարման հնարավորության գնահատում և հիմնավորում,
 - պահեստարանների անվտանգության վերագնահատում,
 - շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում գոյացող ճառագայթաակտիվ թափոնների կանխատեսվող քանակի և բնութագրերի գնահատում,
 - բարձր ակտիվության ազատ տարաների տեխնիկական վիճակի և պահեստարանների մնացորդային ռեսուրսի գնահատում,
 - ճառագայթաակտիվ թափոնների վերամշակման կիրառվող (ներդրված) տեխնոլոգիաների արդյունավետության գնահատում և անհրաժեշտության դեպքում արդյունավետության բարձրացման միջոցառումների մշակում և հիմնավորում,
 - գոյացող ճառագայթաակտիվ թափոնների քանակի նվազեցման արդյունավետության գնահատում,
 - շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում գոյացող ճառագայթաակտիվ թափոնների անվտանգ կառավարման մշակում և հիմնավորում:
- Շահագործող կազմակերպությունը ՀՀ ներքին գործերի նախարարության հավանությանն է ներկայացնում էներգաբլոկի շենքերի, կառույցների և ճառագայթաակտիվ թափոնների պահեստարանների համալիր հետազոտման արդյունքները սեյսմիկ անվտանգության մասով:
- Համալիր հետազոտության արդյունքները պետք է ներկայացվեն շահագործող կազմակերպության կողմից մշակված հաշվետվությամբ՝ կազմված համալիր հետազոտության հաշվետվության ձևին և բովանդակությանը ներկայացվող

պահանջների հաստատման վերաբերյալ ՀՀ ՄԱԿ Կոմիտեի նախագահի 2016 թվականի հունվարի 19-ի N 9-Ն հրամանի համաձայն:

բ. Անվտանգության գնահատում

- Անվտանգության գնահատումը ներառում է ստորև բերված միջոցառումները՝
 - Ատոմային էներգետիկայի ոլորտում գործող ՆՏՓ-երի պահանջներից Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի նախագծի և փաստացի վիճակի շեղումների բացահայտում.
 - ՆՏՓ-երի ընդհանուր ցանկի որոշում, որի համաձայն պետք է կատարվի անհամապատասխանությունների վերլուծություն,
 - լրացուցիչ ՆՏՓ-երի ի հայտ բերում (առաջին երկարացման ընթացքում անհամապատասխանությունների վերլուծության կատարման ժամանակ առկա ՆՏՓ-երի ընդհանուր ցանկի հետ համեմատած),
 - Կարգավորող մարմնի կողմից նոր նշված ՆՏՓ-երի պահանջներից Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի փաստացի վիճակի շեղումների վերլուծության կատարում,
 - Կարգավորող մարմնի կողմից նոր նշված ՆՏՓ-երի պահանջներից Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի փաստացի վիճակի շեղումների վերացման միջոցառումների մշակում:
- ԳՇԽ-ի ցանկացած մասում Դյ 200մմ համարժեք տրամագծով արտահոսքի փոխհատուցման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցառումների (գործող ԱԳՎՀՀ-ի մոդիֆիկացիա) հաշվարկային մեթոդով որոշում և իրականացում:
- ՌԿ անվտանգ կանգի և հովացման, շրջակա միջավայր ճառագայթաակտիվ արտանետումների վերահսկման և տեղայնացման վրա հրդեհների ազդեցության վերլուծության մշակում:
- Անվտանգության գնահատման ընթացքում պետք է բացահայտվեն անվտանգության հիմնախնդիրները և պետք է որոշվի էներգաբլոկի անվտանգության վրա դրանց ազդեցության աստիճանը: «ՀԱԷԿ» ՓԲԸ բացահայտված անվտանգության հիմնախնդիրների լուծման համար մշակելու է էներգաբլոկի անվտանգության բարձրացման միջոցառումների ցանկը, որը պետք է համաձայնեցնի կարգավորող մարմնի հետ:

գ. «Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկը շահագործման լրացուցիչ ժամկետին (ՇԼԺ-2) նախապատրաստելու ծրագրի» մշակում

- Համալիր հետազոտության և անվտանգության գնահատման արդյունքների հիման վրա մշակվում է Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկը ՇԼԺ-2-ին նախապատրաստելու ծրագիրը, որը ներառում է այն աշխատանքների ծավալը և բովանդակությունը,

որոնց կատարումը պետք է ապահովի կանոնակարգված պահանջների պահպանմամբ ՇԼԺ-2-ի ընթացքում էներգաբլոկը շահագործելու տեխնիկական հնարավորությունը:

- Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկը ՇԼԺ-2-ին նախապատրաստելու ծրագիրը պետք է ներառի.
 - շահագործման լրացուցիչ ժամանակահատվածում էներգաբլոկի անվտանգության ապահովման տեխնիկական միջոցառումներ,
 - ռեսուրսը սպառած տարրերի փոխարինման միջոցառումներ,
 - չվերականգնվող և չփոխարինվող տարրերի շահագործման ժամկետի երկարացման հիմնավորման աշխատանքներ,
 - ՇԼԺ-2 ընթացքում Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի անվտանգության պարբերական դիտարկման (ԱՊԴ) աշխատանքների իրականացում,
 - համակարգերի (տարրերի) կարգաբերման աշխատանքների և փորձարկումների իրականացում,
 - էներգաբլոկի շահագործման և նրա անվտանգության հիմնավորման փաստաթղթերի լրամշակում,
 - տարրերի ռեսուրսի կառավարման, նրանց տեխնիկական սպասարկման և վերանորոգման փաստաթղթերի լրամշակում,
 - շահագործող անձնակազմի վերապատրաստում:
- Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկը ՇԼԺ-2-ին նախապատրաստելու ծրագրի յուրաքանչյուր միջոցառման համար պետք է սահմանել.
 - աշխատանքների իրականացման ժամանակացույցը, որում պետք է նշված լինեն նրանց բովանդակությունը և հաջորդականությունը,
 - որակի ապահովման ծրագրի մշակման ժամկետները՝ ներառյալ իրականացված աշխատանքների ընդունմանը ներկայացվող պահանջները,
 - մշակման ենթակա աշխատանքային ծրագրերի, տեխնիկական առաջադրանքների և այլ նախագծակոնստրուկտորական, կազմակերպական և տեխնիկական փաստաթղթերի ցանկը:
- Առաջին փուլի աշխատանքների արդյունքների հիման վրա «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն որոշում է կայացնում Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկը շահագործման լրացուցիչ ժամկետին նախապատրաստելու վերաբերյալ: Որոշումը պետք է ներկայացվի ՀՀ ՄԱԿ Կոմիտե:
- Շահագործող կազմակերպությունը («ՀԱԷԿ» ՓԲԸ) ընդունված որոշմանը պետք է կցի և ՀՀ ՄԱԿ Կոմիտե ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝
 - էներգաբլոկի համալիր հետազոտության հաշվետվությունը,
 - ատոմային էներգիայի օգտագործման ոլորտում գործող իրավական ակտերի պահանջներից Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի նախագծի և փաստացի վիճակի շեղումների վերլուծության հաշվետվությունը (ՀՀ ՄԱԿ Կոմիտեի կողմից

նշված նոր ՆՏՓ-երի հետ անհամապատասխանությունների վերլուծության կատարման դեպքում),

- Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկը շահագործման լրացուցիչ ժամկետին նախապատրաստելու ծրագիրը:
- ՀՀ ՄԱԿ Կոմիտեն ներկայացված փաստաթղթերի դիտարկման հիման վրա հավանություն է տալիս առաջին փուլի աշխատանքների արդյունքներին կամ շահագործող կազմակերպությանը լրացուցիչ աշխատանքների կատարման պահանջ է ներկայացնում: Նշված փաստաթղթերի քննարկումն անցկացվում է կարգավորող մարմնի կողմից վերջին փաստաթղթի գրանցումից հետո 90 օրվա ընթացքում:
- Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման աշխատանքների առաջին փուլը համարվում է ավարտված, եթե «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն ստացել է ՀՀ ՄԱԿ Կոմիտեի հավանությունը դրա արդյունքների վերաբերյալ:
- ՇԺԵ-2-ի առաջին փուլի շրջանակներում կատարման ենթակա աշխատանքների ծավալը, բովանդակությունն ու նախնական ժամկետները ներկայացված են Հավելված 2-ում՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման (ՇԺԵ-2) ծրագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման և կատարման պլան, I ՓՈՒԼ (2022-2024)»:

2) II ՓՈՒԼ

ա. Էներգաբլոկի նախապատրաստումը լրացուցիչ ժամանակահատվածում շահագործմանը

- «Ծրագրի» իրականացման ընթացքում աշխատանքների ցանկը կարող է շտկվել և հստակեցվել՝ ելնելով ընթացիկ իրավիճակից կամ ՀՀ ՄԱԿ Կոմիտեի լրացուցիչ պահանջներից:
- «Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկը շահագործման լրացուցիչ ժամկետին նախապատրաստելու ծրագրի»՝ Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործումը շարունակելու թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ ծավալով աշխատանքների իրականացումը պետք է ապահովի.
 - չփոխարինվող և չվերականգնվող տարրերի մնացորդային ռեսուրսի (շահագործման ժամկետի երկարացում) հիմնավորում,
 - էներգաբլոկի անվտանգության դեֆիցիտների վերացումը կամ փոխհատուցումը, այդ թվում՝ մոդիֆիկացիաների միջոցով (էներգաբլոկի անվտանգության բարձրացման միջոցառումների իրականացում),
 - անվտանգության 1-ին, 2-րդ և 3-րդ դասերի՝ ռեսուրսը սպառած տարրերի փոխարինում, ինչպես նաև անվտանգության 4-րդ դասի այնպիսի տարրերի փոխարինում, որոնց խափանումը կարող է հանգեցնել անվտանգության

համակարգերի կողմից սեփական գործառույթների իրականացման անհնարինությունը,

- բլոկի համակարգերի (տարրերի) գործարկման-կարգաբերման աշխատանքների և փորձարկումների կատարում, «ՀԱԷԿ» ՓԲԸ կողմից հաստատված և ՀՀ ՄԱԿ Կոմիտեի հետ համաձայնեցված ծրագրերով,
- շահագործման փաստաթղթերի լրամշակում (անհրաժեշտության դեպքում),
- օպերատիվ և վերանորոգող անձնակազմերի վերապատրաստում (անհրաժեշտության դեպքում),
- ՀԿԲ-երի ծերացման կառավարման ծրագրի՝ ՍՅ.ՅՏԸ.17.ՔՓՅ-004 դրույթների կիրառում,
- Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի Անվտանգության պարբերական դիտարկման (ԱՊԴ) հաշվետվության մշակում,
- ՇԼԺ-2 ընթացքում Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկը շահագործելու թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերի նախապատրաստում:

բ. II փուլում պետք է իրականացվի՝

- Չվերականգնվող և չփոխարինվող տարրերի շահագործման ժամկետի երկարացման հիմնավորում.
- Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի չփոխարինվող և չվերականգնվող տարրերի մնացորդային ռեսուրսի հիմնավորման աշխատանքները պետք է ներառեն հետևյալ միջոցառումները՝
 - անհրաժեշտության դեպքում, չփոխարինվող և չվերականգնվող տարրերի լրացուցիչ հետազոտությունների (վերահսկում, վերաստուգում, փորձարկումներ, հաշվարկներ), տեխնիկական վիճակի գնահատման և մնացորդային ռեսուրսի հիմնավորման ծրագրերի մշակում,
 - լրացուցիչ հետազոտությունների, տեխնիկական վիճակի գնահատման և մնացորդային ռեսուրսի հիմնավորման մշակված ծրագրերի իրականացում:
- Չվերականգնվող և չփոխարինվող տարրերի տեխնիկական վիճակի և մնացորդային ռեսուրսի գնահատման լրացուցիչ աշխատանքները պետք է ուղղված լինեն.
 - վնասակար գործոնների ազդեցության նվազեցման միջոցառումների բացահայտման և նվազեցմանը,
 - տարրերի ռեսուրսի մասնակի վերականգնմանը,
 - նյութերի փաստացի բնութագրերի հետազոտմանը,
 - տարրերի կրիտիկական հանգույցների փաստացի վիճակի հետազոտմանը,
 - տարրերի վիճակի մշտադիտարկման ապահովմանը,

- ամրության հաշվարկների իրականացմանը,
- տարրերի մնացորդային ռեսուրսի գնահատմանը:
- Չվերականգնվող և չփոխարինվող տարրերի մնացորդային ռեսուրսի հիմնավորումը պետք է նախատեսի հետևյալ աշխատանքների կատարումը.
 - մեթոդների, միջոցների, լրացուցիչ հսկման մեթոդակարգերի (այդ թվում, անհրաժեշտության դեպքում, լաբորատոր հետազոտությունների) ընտրություն,
 - գերիշխող վնասակար գործոնների և ծերացման մեխանիզմների բացահայտում և տարրի շահագործման հուսալիության և անվտանգության վրա դրանց ունեցած ազդեցության վերլուծություն,
 - տեխնիկական վիճակի և ծերացման որոշիչ պարամետրերի սահմանում, սահմանային վիճակի չափանիշների սահմանում,
 - լրացուցիչ (ստուգաչափական) հաշվարկներ (անհրաժեշտության դեպքում) և ռեսուրսային բնութագրերի (մնացորդային ռեսուրսի) թվային արժեքների սահմանում,
 - առանձին աշխատանքների (աշխատանքի փուլերի) արդյունքների հիման վրա հաշվետու փաստաթղթերի ձևակերպում, «Տեխնիկական վիճակի և տարրի մնացորդային ռեսուրսի վերաբերյալ եզրակացություններ» նախագծի մշակում, ինչպես նաև տվյալ տարրի կողմից նախագծային գործառույթների կատարման հնարավորությունը (կամ անհնարինությունը) հաստատող ակտի մշակում՝ ապահովելով միջուկային, ռադիացիոն և տեխնիկական անվտանգության բոլոր պահանջները:
- Չվերականգնվող և չփոխարինվող տարրերի մնացորդային ռեսուրսը հիմնավորելու համար Կատարողի կողմից մշակված եզրակացության նախագիծը ներկայացվում է համաձայնեցման (Հայկական ԱԷԿ-ում գործող կարգի համաձայն) և ՇԺԵ-2 կայանային հանձնաժողովի նախագահի (Հայկական ԱԷԿ ԳՃ) հաստատմանը:
- Եթե մշակված եզրակացությունը թույլ է տալիս տարրի հետագա շահագործումը միայն որոշակի պայմաններում, ապա եզրակացությանը պետք է կցվի Կատարողի կողմից մշակված այդ պայմաններն ապահովող կազմակերպչական-տեխնիկական միջոցառումների ցանկը (մշտադիտարկում, վերանորոգում, վերականգնում, արդիականացում, փոխարինում և այլն):
- Հիմք ընդունելով «Տարրի տեխնիկական վիճակի և մնացորդային ռեսուրսի վերաբերյալ եզրակացությունը»՝ բոլոր հավելվածներով, ՇԺԵ-2 Կայանային հանձնաժողովի կողմից մշակվում է «Տարրի հետագա կառավարման վերաբերյալ որոշման» նախագիծ (տարրի հետագա շահագործման կամ դրա փոխարինման/արդիականացման հնարավորության և պայմանների վերաբերյալ):
- Ներկայացվող Որոշումը պետք է բաղկացած լինի մեկը հետևյալներից՝
 - տարրի նախագծային պարամետրերով շահագործման շարունակում մնացորդային ռեսուրսի ողջ ժամանակահատվածի ընթացքում,

- տարրի նախագծային պարամետրերով շահագործման շարունակում սահմանափակ ժամկետի ընթացքում (մնացորդային ռեսուրսից պակաս),
- նախագծային պարամետրերով շահագործման շարունակում՝ որոշակի պայմաններ ապահովող կազմակերպչական-տեխնիկական միջոցառումների պարտադիր կատարմամբ (ճշգրտված մշտադիտարկում, վերանորոգում, արդիականացում, առանձին տարրերի փոխարինում և այլն):
- Տարրի (մի խումբ տարրերի) տեխնիկական վիճակի, մնացորդային ռեսուրսի և հետագա շահագործման հնարավորության վերաբերյալ որոշումը ստորագրվում է ՇԺԵ-2-ի կայանային հանձնաժողովի անդամների կողմից, համաձայնեցվում է աշխատանքում ներգրավված մասնագիտացված կազմակերպությունների հետ և հաստատվում.
 - ԳՏ ԱՏ – Հայկական ԱԷԿ-ի տնօրենի կողմից՝
 - ՀՀ ՄԱԿ Կոմիտեում վերահսկողության տակ գտնվող անվտանգության առաջին և երկրորդ դասերի բոլոր տարրերի մասով՝ НП-001-15-ի համաձայն,
 - Հայկական ԱԷԿ-ի գլխավոր ճարտարագետի կողմից՝
 - ✓ ՀՀ ՄԱԿ Կոմիտեում վերահսկողության տակ չգտնվող անվտանգության երկրորդ դասի տարրերի մասով, և անվտանգության 3-րդ և 4-րդ դասերի բոլոր տարրերի մասով՝ НП-001-15-ի համաձայն,
 - ✓ Շինությունների և կառույցների մասով՝ НП-031-01-ի համաձայն,
 - ✓ Բեռնամբարձիչ մեխանիզմների մասով՝ НП-043-18 համաձայն:
- Բոլոր տարրերի, այդ թվում չփոխարինվող և չվերականգնվող տարրերի վերաբերյալ որոշումներում ներառվում են ՀԿԲ-երի շահագործումը շարունակելու հետ կապված բոլոր միջոցառումները, ինչպես նաև բնութագրավկայականներում ներառվում են անհրաժեշտ փոփոխությունները՝ բնութագրավկայականների լրացման վերաբերյալ գործող ՆՏՓ-երի պահանջների համաձայն:
- Հաստատված Որոշումների հիման վրա ՇԺԵ-2-ի Կայանային հանձնաժողովը մշակում և «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի հաստատմանն է ներկայացնում Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի հետագա շահագործման վերաբերյալ որոշում:
- Հայկական ԱԷԿ-ի ԳՃ կողմից 2021 թվականի մայիսի 11-ին հաստատված «Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի ծերացման կառավարման նպատակով համակարգերի, կառուցատարրերի և բաղադրատարրերի ընտրության մեթոդիկա» - ՍԵ.ՅՏԴ.28.ՔՈՅ-001 փաստաթղթում նշված չափանիշների համաձայն ընտրված չփոխարինվող և չվերականգնվող տարրերի, ինչպես նաև անվտանգության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ դասերի տարրերի հետազոտության, տեխնիկական վիճակի գնահատման և մնացորդային ռեսուրսի հիմնավորման ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքների փաստաթղթավորված արդյունքները (հաշվետվություններ, եզրակացություններ, հաշվարկներ, որոշումներ) ներկայացվում են ՀՀ ՄԱԿ Կոմիտե՝ համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1085-Ն որոշման հավելվածի 35-րդ կետի 1÷4 ենթակետերի:

գ. Էներգաբլոկի անվտանգության բարձրացման միջոցառումների իրականացում:

- Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի արդիականացման այն աշխատանքները, որոնք սահմանափակված չեն օբյեկտների տեխնոլոգիական հասանելիությամբ, իրականացվում են աշխատանքների՝ ժամանակացույցի համապատասխան իրականացմանը պատրաստ լինելուն զուգընթաց:
- Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի արդիականացման այն աշխատանքները, որոնք սահմանափակված են օբյեկտների տեխնոլոգիական հասանելիությամբ, իրականացվում են պլանային-նախագգուշական վերանորոգումների ժամանակահատվածում, ներառվում են համապատասխան տարվա ՊՆՎ ծավալի և ժամանակացույցի մեջ:
- Հայկական ԱԷԿ-ի անվտանգության բարձրացմանն ուղղված մոդիֆիկացիայի առանձին լայնածավալ աշխատանքները, կամ հիմնական սարքավորումների կամ Հայկական ԱԷԿ-ի՝ որպես էներգիա արտադրող կազմակերպության ֆունկցիոնալությունը որոշող սարքավորումների արդիականացմանն ուղղված աշխատանքները կարող են իրականացվել ըստ առանձին նախագծերի և ժամանակացույցի, Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի ՊՆՎ տևողության հնարավոր ավելացմամբ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համաձայնեցնելով:
- Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի Անվտանգության պարբերական դիտարկման հաշվետվության մշակում:
- ԱՊԴ հաշվետվությունը մշակելիս անհրաժեշտ է գնահատել անվտանգության հետևյալ 14 գործոնները՝
 - Կայանի անվտանգությանը վերաբերող գործոններ.
կայանի նախագիծ,
անվտանգության համար կարևոր համակարգերի, կոնստրուկցիաների և բաղադրիչների (ՀԿԲ) փաստացի վիճակ,
սարքավորման ատեստավորում,
ծերացում:
 - Անվտանգության վերլուծությանը վերաբերող անվտանգության գործոններ.
անվտանգության դետերմինիստական վերլուծություն,
անվտանգության հավանականային վերլուծություն,
վտանգների վերլուծություն:
 - անվտանգության վիճակին և շահագործման փորձը հաշվի առնելուն վերաբերող անվտանգության գործոններ.
անվտանգության վիճակը,
այլ կայանների փորձի և հետազոտությունների արդյունքների կիրառում:

- Կառավարմանը վերաբերող անվտանգության գործոններ.
կազմակերպում, կառավարում և անվտանգության մշակույթի համակարգ, ընթացակարգեր, մարդկային գործոն, վթարային պլանավորում:
- Շրջակա միջավայրին վերաբերող անվտանգության գործոն.
ռադիոլոգիական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:
- Անվտանգության գործոնները դիտարկելիս անհրաժեշտ է հետևյալ արդյունքների ստացումը՝
 - դրական (այն է՝ ուժեղ կողմերը), երբ ներկայիս պրակտիկան, համաձայն գործող նորմատիվ- տեխնիկական փաստաթղթերի, համարժեք է օրինակելի համարվող պրակտիկային,
 - բացասական (այն է՝ շեղումները), երբ ներկայիս պրակտիկան համարժեք չէ գործող նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով կամ արդյունաբերական պրակտիկայով սահմանված ստանդարտին, կամ չի համապատասխանում գործող լիցենզիայի հիմքին, կամ հակասում է կայանի շահագործման փաստաթղթերին կամ շահագործման ընթացակարգերին:
- Էներգաբլոկի ԱՊԴ հաշվետվության մեջ չի ներառվում միջուկային կայանքների ֆիզիկական անվտանգության դիտարկումը՝ պայմանավորված տեղեկատվության զգայունությամբ և գաղտնիության ապահովման անհրաժեշտությամբ: Միջուկային անվտանգությունը վտանգող չարտոնված գործողությունների կանխմանն ուղղված ֆիզիկական անվտանգության միջոցառումների արդյունավետությունը պետք է պարբերաբար վերանայվի համապատասխան ազգային իրավասու մարմինների կողմից:
- ԱՊԴ հաշվետվության մշակումը անհրաժեշտ է իրականացնել հինգ փուլով, որոնք կարող են միմյանց վերաձածվել, անհրաժեշտ դեպքերում, կարող են հետագայում բաժանվել առանձին փուլերի՝
 - ԱՊԴ իրականացման ծրագրի նախապատրաստում:
 - Ծրագրի համաձայնեցում ՀՀ ՄԱԿ Կոմիտեի հետ:
 - ԱՊԴ իրականացում:
 - ԱՊԴ հաշվետվության անկախ փորձաքննության իրականացում:
- ԱՊԴ հաշվետվության շտկված տարբերակի ներկայացում ՀՀ ՄԱԿ Կոմիտեի հաստատմանը՝ հայտնաբերված դեֆիցիտների վերացման ժամանակացույցի հետ մեկտեղ:
- Անվտանգության պարբերական դիտարկման հաշվետվության մշակումը իրականացվում է համաձայն ծրագրի (տեխնիկական առաջադրանքի), որը ներառում է.
 - կիրառվող վերջնաժամկետները, այսինքն վերլուծության իրականացման համար օգտագործվում է այդ պահին գործող ՆՏՓ և ատոմային էներգիայի

օգտագործման բնագավառը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև էներգաբլոկի կոնֆիգուրացիան,

- կայանի լիցենզիայի հիմքը ԱՊԴ կատարման պահի դրությամբ,
- համապատասխան կարգավորող պահանջներ,
- ԱՊԴ-ի շրջանակներում դիտարկման ենթակա անվտանգության գործոնների և դրանց փոխկապակցվածության (ինտերֆեյսերի) ցանկը,
- դիտարկման նկատմամբ համակարգված մոտեցման նկարագիրը, որը կիրառվելու է դիտարկման ամբողջականության և բազմակողմանիության ապահովման նպատակով,
- բացասական արդյունքների բացահայտման, դասակարգման, առաջնահերթությունների որոշման և վերացման գործընթացները,
- աշխատողների առողջությանը և/կամ անվտանգությանը, հասարակության կամ շրջակա միջավայրի անվտանգությանը սպառնացող ցանկացած անմիջական և նշանակալի ռիսկերին արագ արձագանքելու գործընթաց, որը բացահայտվել է ԱՊԴ ընթացքում,
- գլոբալ գնահատման ժամանակ կիրառվելիք մեթոդաբանությունը և գլոբալ գնահատման վերաբերյալ հաշվետվության պլանավորվող կառուցվածքը,
- անվտանգության բարձրացման միջոցառումների իրականացման համապարփակ պլանի պատրաստման ուղեցույցը,
- համակարգված մեթոդը, որը կկիրառվի ԱՊԴ ելքային տվյալների գրանցման նպատակով՝ ներառյալ ներքոնշյալ փաստաթղթերի ենթադրյալ ձևաչափերը՝
 - ✓ անվտանգության գործոնի վերաբերյալ հաշվետվություններ,
 - ✓ գլոբալ գնահատման վերաբերյալ հաշվետվություն,
 - ✓ ԱՊԴ վերջնական հաշվետվություն՝ ներառյալ անվտանգության բարձրացման միջոցառումների իրականացման համապարփակ պլանը:
- Անհրաժեշտ նորմատիվ և/կամ մեթոդական փաստաթղթերի բացակայության դեպքում ԱՊԴ իրականացման ծրագիրը պետք է նախատեսի այլ փաստաթղթերի, ներառյալ ԱԷՄԳ-ի համապատասխան փաստաթղթերի օգտագործման հնարավորությունը, կամ պետք է որոշվի մշակվելիք նորմատիվ, ղեկավար և մեթոդական փաստաթղթերի ցանկը:
- ԱՊԴ հաշվետվությունը մշակելիս կարող են օգտագործվել անվտանգության առկա հիմնավորումները, ուսումնասիրությունների և փորձարկումների արդյունքները, անվտանգության պլանային և նպատակային ստուգումները և այլն:
- ԱՊԴ հաշվետվության մշակման շրջանակներում «ԱԷԿ» ՓԲԸ-ն կազմում է ՇԼԺ-2-ի ընթացքում Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների լրացուցիչ ցանկը:
- Նշված միջոցառումները, ԱՊԴ իրականացման ծրագրի համաձայն, դասակարգվում են ըստ Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի անվտանգության վրա իրենց ազդեցության աստիճանի: Միջոցառումների իրականացման առաջնահերթությունը

որոշելու նպատակով պետք է օգտագործվեն դետերմինիստական, ճարտարագիտական գնահատականներ, Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման փորձը և Հայկական ԱԷԿ-ի անվտանգության վրա դրանց ազդեցության աստիճանի հավանականության մեթոդներով կատարված գնահատականը:

- ԱՊԴ հաշվետվության դիտարկման ընթացքում և լիցենզիայի ժամկետի երկարացման նպատակով իրականացվում է «ՀԱԷԿ» ՓԲԸ և ՀՀ ՄԱԿ Կոմիտեի փոխգործակցությունը՝ քննարկելու և համաձայնեցնելու ի հայտ եկող առանձին հարցեր և, անհրաժեշտության դեպքում, տրամադրելու լրացուցիչ հիմնավորող նյութեր:
- Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկը ՇԼԺ-2 ժամանակահատվածում շահագործելու թույլտվություն ստանալու նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստում:
- Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման թույլտվությունը ՇԼԺ-2 ժամանակահատվածում կարելի է ստանալ ՀՀ ՄԱԿ Կոմիտեին ներկայացված միջուկային և ճառագայթային անվտանգության ապահովումը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա, որոնք կազմվել են Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի ՇԺԵ-2-ի միջոցառումների իրականացման ընթացքում՝ Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի նախագծային ժամկետի երկարացմանը ներկայացվող պահանջներին» (ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1085-Ն Որոշման հավելված) համապատասխան՝
 - չփոխարինվող և չվերականգնվող տարրերի շահագործման ժամկետի երկարացումը հիմնավորող հաշվետվություն,
 - էներգաբլոկի անվտանգության բարձրացման և արդիականացման միջոցառումների իրականացման վերաբերյալ հաշվետվություն,
 - էներգաբլոկի համակարգերի (տարրերի) փորձարկումների վերաբերյալ հաշվետվություն,
 - էներգաբլոկի անվտանգության պարբերական դիտարկման վերաբերյալ հաշվետվություն:
- Թույլտվություն ստանալու հայտի մեջ ներառված վերոնշյալ փաստաթղթերը պետք է ուղարկվեն ՀՀ ՄԱԿ Կոմիտե Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման նշանակված ժամկետի ավարտից առնվազն երեք ամիս առաջ:
- ՇԺԵ-2-ի երկրորդ փուլով կատարվելիք աշխատանքների ծավալը, բովանդակությունն ու նախնական ժամկետները ներկայացված են փաստաթղթի Հավելված 2-ում՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման (ՇԺԵ-2) ծրագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման և կատարման պլան , II ՓՈԽԼ (2024 - 2026)»:

5. ՇԺԵ-2-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

ՇԺԵ-2-ի իրագործման ֆինանսական գնահատականը տալու նպատակով իրականացվել են որոշակի քայլեր: Քանի որ տվյալ փուլում հնարավոր չէր բոլոր միջոցառումների համար կազմել տեխնիկական առաջադրանքներ և ստանալ պրոֆիլային ընկերությունների գնառաջարկները, հաշվի առնելով նաև այն, որ առանձին բնութագրեր կազմելիս անհրաժեշտ է լինում նաև ատոմային էներգետիկայի բնագավառի նեղ մասնագիտացված գիտահետազոտական ինստիտուտների ներգրավումը, որոնք ՀՀ-ում առկա չեն, նախնական միջոցառումների ցանկը կազմվել և ուղարկվել է «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ՝ դրանք գնահատելու և աշխատանքների կատարումը սահմանված ժամկետներում ապահովելու նպատակով:

Արդյունքում, ՌԴ գործընկերների գնահատմանն ուղարկված ընդհանուր միջոցառումների մի մասով ստացվել է գնային առաջարկ՝ 149,9 մլն դոլարի չափով, մնացած միջոցառումների համար ռուսական կողմը գնահատման առաջարկներ չի ներկայացրել՝ թողնելով դրանց կատարումը Հայկական ԱԷԿ-ի գործունեության տիրույթում:

Կայանի բազմամյա փորձ ունեցող մասնագետների կողմից ուսումնասիրվել են «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ գնային առաջարկները, իրականացվել է ապրանքների և ծառայությունների խիստ մոտավոր գնահատում՝ կիրառելով նախկինում Հայկական ԱԷԿ-ում գործընկերների կողմից կատարված նմանօրինակ և մոտավորապես նույն ծավալների աշխատանքների արժեքները: Արդյունքում, ՇԺԵ-2 միջոցառումներն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախնական գնահատմամբ կազմել են շուրջ 160 մլն ԱՄՆ դոլար:

Նշված միջոցառումներից առանձնացվել են այն միջոցառումները (կազմվել է ցանկ), որոնք նախընտրելի է իրականացնել «Ռուսատոմ» ՊԿ կառուցվածքի մեջ մտնող կազմակերպությունների ներգրավմամբ՝ հաշվի առնելով համապատասխան սարքավորումների և պահեստամասերի արտադրման և մատակարարման ժամկետները, աշխատանքների կատարման առանձնահատկությունները (ճառագայթային գոտի, վնասակար պայմաններ և այլն):

Այս միջոցառումները վերաբերում են ռեակտորային տեղակայանքի համակարգերին և սարքավորումներին, իրականացումն ապահովվում է՝ հաշվի առնելով բոլոր փուլերը՝ նախագծում, հաշվարկներ, հետազոտություններ, անվտանգության հիմնավորում, սարքավորումների և նյութերի մատակարարում, կարգաբերում և փորձարկումներ:

ՀՀ ՄԱԿ Կոմիտեից Հայկական ատոմային էլեկտրակայանի հետագա շահագործման նոր լիցենզիա ձեռք բերելու համար միջոցառումները պետք է իրականացվեն 2023-2026 թվականները ընկած ժամանակահատվածում: Ընդ որում, նորմատիվային պահանջների համաձայն՝ ռեակտորային տեղակայանքի համակարգերում և սարքավորումներում բոլոր աշխատանքները պետք է համաձայնեցվեն Հայկական ատոմային էլեկտրակայանի գլխավոր նախագծողի (АО «АЭП»), ռեակտորային տեղակայանքի գլխավոր կոնստրուկտորի (АО ОКБ «ГИДРОПРЕСС»), շահագործման գիտական ղեկավարի (НИЦ «Курчатовский институт») հետ:

Բոլոր այդ կազմակերպությունների, ինչպես նաև ռեակտորային սարքավորումներ արտադրողների (АО «Ижорские заводы», ЦКБМ, ЦКТИ, ЗиО «Подольск»), շահագործման նորմատիվային աջակցության կառույցի (ВНИИАЭС), գլխադասային նյութագիտական կազմակերպությունների (ЦНИИТМАШ, НИКИМТ) հետ, որոնք մտնում են «Ռուսատոմ» ՊԿ-ի կառուցվածքի մեջ կամ գտնվում են վերջինիս ազդեցության տիրույթում, պայմանագրերը կարող են կնքվել միայն «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ-ի միջոցով: Յուրաքանչյուր նախատեսվող միջոցառման իրականացման համար պահանջվում է ներգրավել վերոնշյալ կազմակերպություններից մի քանիսին և կնքել համապատասխան պայմանագրեր: Այս խնդրի լուծումը հնարավոր է միայն «Ռուսատոմ» ՊԿ-ի միջնորդությամբ, որը հնարավորություն ունի ճիշտ պահին ներգրավելու յուրաքանչյուր համապատասխան կազմակերպությանը՝ կոնկրետ նեղ մասնագիտացված աշխատանքի կատարման համար:

ՇԺԵ-2 ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու նպատակով նախատեսվում է մոտ 65 մլն ԱՄՆ դոլարի չափով կնքել շրջանակային համաձայնագիր «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ հետ:

6. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՇԺԵ-2-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՇԺԵ-2 նախագծի միջոցառումների իրականացման նպատակով անհրաժեշտ ֆինանսական մեխանիզմները և աղբյուրները կհատկացվեն հետագա քննարկումների արդյունքներով:

Որպես սակագնի վրա ազդեցության ելակետային տվյալ օգտագործվում է վարկի ներգրավումը 12 տարով՝ 11% տոկոսադրույքով, 2 տարի մայր գումարի վճարումից ազատելու տարբերակով: Հիշյալ ելակետային տվյալները (այդ թվում՝ 7-րդ կետում ներկայացված գնահատումները) քննարկումների արդյունքներով կարող են փոփոխվել:

7. ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի N-2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԿՐԿՆԱԿԻ ԵՐԿԱՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ՆԿԱԶԱԳՈՒՅՆ ԾԱԽՍԵՐՈՎ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԵՏԳՆՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-ՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎՐԱ

Ներկայում Հայկական ԱԷԿ-ում արտադրվող էլեկտրաէներգիայի սակագինը ձևավորվում է ՀԾԿՀ-ի սակագնային քաղաքականության համաձայն և 2023-2024 թվականների համար սահմանվել է 15.095 դրամ/կՎտժ: Սակագինն իր մեջ ներառում է վարկային պարտավորությունների գծով վճարումները: Այս վճարումները գերիշխող են և կազմում են էլեկտրաէներգիայի արտադրության ընդհանուր արժեքի մոտ 51%-ը: Տրամադրված վարկերի տեսքով նոր ներդրումները կբերեն այս ծախսային հոդվածի աճի և դրանով իսկ՝ արտադրական ընդհանուր ծախսերի աճի: Վարկային պարտավորությունների գծով վճարումների աճն ուղղակիորեն որոշվում է տրամադրված վարկի պայմաններով (տարեկան տոկոսադրույք, մայր գումարի մարման ժամկետներ, արտոնյալ ժամկետ և այլն): Նոր ներդրումների գծով վարկային բեռի ազդեցությունը գնահատելու համար, որպես հաշվարկային տարբերակ ընդունվել է 160.0 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկի ներգրավում ՀՀ բյուջեից (12 տարի մարման ժամկետ, որից 2 տարին արտոնյալ, 11% տարեկան տոկոսադրույք, կիսամյակային վճարումներով): Վարկի սպասարկումը հավասարաչափ բաշխելով՝ 12 տարվա համար Հայկական ԱԷԿ-ի սակագնի վրա բեռը կլինի շուրջ 3,2 դրամ/կՎտժ՝ տարեկան 3 մլրդ կՎտժ առաքման դեպքում (փոխարժեք 1\$=395,19 ՀՀ դրամ): Ըստ տարիների բաշխվածության վերջինս վարկի սպասարկման արտոնյալ ժամանակահատվածում՝ առաջին 2 տարում, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի վրա կազմում է 2,32 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի, ապա 3-րդ տարում աճողական ազդեցությունը կազմում է 4,37 դրամ/կՎտժ, որը հետագա տարիներին աստիճանաբար նվազում է՝ հասնելով մինչև 2,28 դրամ/կՎտժ-ի: Նմանապես, սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագների վրա նշված վարկի սպասարկման ազդեցությունն առաջին 2 տարում կկազմի 1,04 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի, ապա 3-րդ տարում աճողական կկազմի 1,96 դրամ/կՎտժ, որը հաջորդ տարիներին աստիճանաբար կնվազի՝ հասնելով մինչև 1,023 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի:

Ինչպես արդեն հիմնավորվել է վերը շարադրվածում էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների, հաճախականության պահպանման անհրաժեշտությունից ելնելով Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի կողմից արտադրվող էլեկտրաէներգիան կարող է փոխարինվել միայն բազիսային կայաններում արտադրվող էլեկտրաէներգիայով, այն է, մեր պարագայում գազային ջերմակայաններում արտադրվող էլեկտրաէներգիայով: Ջերմակայանների կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի սակագինը՝ 1 ԱՄՆ դոլարը 395,19 ՀՀ դրամ և 165 ԱՄՆ դոլար 1000 մ³ Հայաստանի Հանրապետության սահմանին գազի գնի պայմաններում տատանվում է 23,8-28,5 դրամի սահմաններում՝ կախված արտադրող կայանի ՕԳԳ-ից: Սակայն, ինչպես տեսնում ենք վերջին տարիներին գազի գինը համաշխարհային շուկաներում շարունակաբար աճում է, և բոլոր կանխատեսումները առաջիկա 10 տարիների համար ևս աճողական են, ինչը չի բացառում նաև մեր երկրում ևս գազի ներմուծման գնի բարձրացման հավանականությունը առաջիկա տարիներին: Բացի այդ, միջուկային էներգիայի արտադրությունը գազով փոխարինելը կբարձրացնի ներմուծվող գազից առանց այդ էլ մեծ կախվածությունը, ինչը հղի է էներգետիկ անկախության մակարդակի անթուլատրելի իջեցմամբ: Այնուամենայնիվ, եթե նույնիսկ վերցնենք այսօրվա գազի գնի պայմաններում էլեկտրաէներգիայի արտադրության նվազագույն սակագինը և համեմատենք Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման համար անհրաժեշտ ներդրումների հետգնման ազդեցությամբ ձևավորվող սակագները, ապա պատկերը միանշանակ է, որ էլեկտրաէներգիայի արտադրության նվազագույն ծախսերով զարգացման հեռանկարից ելնելով պետք է գնալ Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման ճանապարհով:

Հաշվարկը ստորև՝

Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի քանակ- 3 մլրդ կՎտժ

Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի հնարավոր սակագին ՇԺԵ-2 ծրագրի ավարտից հետո- 18,25 ՀՀ դրամ

Ջերմակայանների կողմից առաջարկվող նվազագույն սակագին 23,82 ՀՀ դրամ

Մեկ տարվա կտրվածքով առաջացող տարբերություն (23,82-18,25)*3 մլրդ = 16,71 մլրդ ՀՀ դրամ

10 տարվա ընթացքում շուրջ 422.8 մլն ԱՄՆ դոլար խնայողություն:

Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի ընթացքում կանխատեսվող սպառումը կկազմի շուրջ 6687590000 կՎտժ էլեկտրաէներգիա: Հետևապես ներգրավվող վարկի ազդեցությունը վերջնական սպառողի սակագնի նկատմամբ կլինի շուրջ 1,42 ՀՀ դրամ, եթե պահպանվի սպառման ներկա մակարդակը, սակայն էլեկտրաէներգիայի սպառումը Համախառն ներքին արդյունքի աճին զուգահեռ ամեն տարի աճում է, ինչը նշանակում է այդ միտումի շարունակականության պահպանման

պարագայում ամեն տարի վարկային բեռի ազդեցությունը վերջնական սպառողի սակագնի վրա կթուլացնի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ